

Դասընթացի անվանումը՝	«Ավտովթարների գործերով դատական պրակտիկան»
Տևողությունը՝	16 ակադեմիական ժամ
Ժամանակահատվածը՝	2012թ.
Անցկացման վայրը՝	ՀՀ վճռաբեկ դատարանի կոնֆերանսների դահլիճ
Մասնակիցների առավելագույն քանակը՝	25

Դասընթացը նախատեսված է ընդհանուր իրավասության դատարանների, վերաքննիչ քրեական դատարանի, վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորների, ինչպես նաև դատավորների թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկված անձանց համար:

Դասընթացն անդրադառնում է ավտովթարների գործերով ծագող հիմնախնդիրների քննարկմանը և դատական պրակտիկայի ներկայացմանը: Դասընթացի ընթացքում քննարկվում են, մասնավորապես, հետևյալ հարցերը.

- Ճանապարհային երթևեկության կանոնները խախտելը:
- Տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը:
- Ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելը:
- Պատճառված վնասի հատուցումը, պրակտիկայում գործող չափանիշները:
- ՀՀ դատական պրակտիկան:

Դասընթացը վարում են ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորները: